ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից հայտարարված ԲՏԱՆ-ԴՄ-2023/03 ծածկագրով դրամաշնորհային մրցույթի հանձնաժողովի նիստի

ք. Երևան **«16» հունիս 2023թ. ժամը՝ 14:00-ին**

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Հրանտ Մկրտչյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ծրագրերի վարչության պետ

հանձնաժողովի անդամներ՝

Լիլիթ Պետրոսյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ

Քրիստինե Ավետիսյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ծրագրերի վարչության վարչության ավագ մասնագետ

Սերգեյ Աբրահամյան՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի ավագ գիտաշխատող, հանձնաժողովի անդամ/համաձայնությամբ

Անդրանիկ Աղաջանյան՝ «Փրոջեկտ ինտեգրեշն» ընկերության ինժեներ, ծրագրային ապահովման գծով տնօրեն, հանձնաժողովի անդամ/համաձայնությամբ

Օֆելյա Ասատրյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էր՝

Հովհաննես Ադաջյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ծրագրերի վարչության վարչության գլխավոր մասնագետ

Յանա Բաբայան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության մասնագետ

1. ***<u>Տեղեկատվություն՝ ԲՏԱՆ-ԴՄ-2023/03 ծածկագրով դրամաշնորհային մրցույթի շրջանակում մասնակիցների կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ:</u>***

Հրավերով սահմանված կարգով և ժամկետում հայտում արձանագրված անհամապատասխանությունը շտկել է միայն «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն» ՍՊԸ-ն: Շտկված հայտը ստանալուց հետո գնահատող հանձնաժողովի կողմից իրականացվեց գնահատում, որի արդյունքում՝

Հանձնաժողովը որոշեց՝

- «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և առաջարկում է սահմանված կարգով կնքել դրամաշնորհային պայմանագիր «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն» ՍՊԸ-ի հետ:
- «Պերսոնա Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով ԲՏԱՆ-ԴՄ-2023/03 ծածկագրով դրամաշնորհային մրցույթի հրավերի 2.3 կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը, այն՝

- Հարկային մարմիններից ընկերության հարկային պարտավորությունների մասին տեղեկանքը չի համապատասխանում հրավերի պայմաններին, այն է՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային

մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց պարտավորություններ, որը գերազանցում է 50,000 (հիսուն հազար) << դրամը

- «Գրուպ 404» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում հայտում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու հիմքով, այն է՝

-Ներկայացված ծրագիրը չի համապատասխանում սույն դրամաշնորհային ծրագրին,
- Պայմանագրի նախագծի Հավելված 1-ի «Նկարագիրը» սյունակում նշված հայտով ներկայացվելիք փաստաթղթերը բացակայում են,
- Առկա են անհամապատասխանություններ ներկայացված նախահաշվում / Հավելված 2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ/:

2. Հայտերի գնահատման արդյունքները՝

N	Մասնակցի անվանումը (անունը)	Հրանտ Մկրտչյան	Լիլիթ Պետրոսյան	Քրիստինե Ավետիսյան	Սերգեյ Աբրահամյան	Անդրանիկ Աղաջանյան	Արդյունքները
1	«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն» ՍՊԸ	Բավ.	Բավ.	Բավ.	Բավ.	Բավ.	Բավարար
2	«Պերսոնա Գրուպ» ՍՊԸ	Անբավ.	Անբավ.	Անբավ.	Անբավ.	Անբավ.	Մերժված
3	«Գրուպ 404» ՍՊԸ	Անբավ.	Անբավ.	Անբավ.	Անբավ.	Անբավ.	Մերժված

Հանձնաժողովի՝
Նախագահ՝

_____ Հրանտ Մկրտչյան

Անդամներ՝

_____ Լիլիթ Պետրոսյան

_____ Քրիստինե Ավետիսյան

_____ Սերգեյ Աբրահամյան

_____ Անդրանիկ Աղաջանյան

Քարտուղար՝

_____ Օֆելյա Ասատրյան